ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԱՀԱԿԻՐ

Հ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՇՔԱՐՅԱՆ

Ուժեղ անհատներ են անոնք: Ուղղություն տված են դարերու և անոնց վրա դրած իրենց սեփական դրոշմը: Գաղափարներով խորացած են ու հասունացած գաղափարականներով: Իրենց տեսիլներուն ենթարկեր են ժամանակը, շրջապատը, կենակիցները: Համամարդկային տեսիլներ – մարդկության: Ազգային տեսիլներ – ազգին:

Հայ ազգային մշակույթը ե դարուն նշված իմաստով կապուած էր սերտորեն Մաշտոցի և անոր անխորտակելի կնիքը պիտի կրե միշտ: Հայ ազգային մշակույթը Ժ–ԺԲ դարերուն իր բնորոշ գիմագիծը կստանա ճարտարապետ Տրդատներե, հովվապետ Շնորհալիներե: Իսկ ԺԸ–ԺԹ դարերու հայ մշակույթը կը գտնվի շունչին և ոգիին ներքև Մխիթար Սեբաստացիին և Մխիթարյաններուն: Գիտակցին կամ ոչ շատերը – ատոր, ընգունին կամ ոչ – սակայն այդ է ճշմարտությունը:

Մաշտոցի գիծն ու գործը կը շարունակեն Մխիթարյանները եռանգուն: Գիծ ու գործ – ընգհատված էին մթության և գռեհկության դարերով: Մաշտոց պիտի գործեր նման Մխիթարի եթե ապրեր ԺԸ դարուն: Ու Մխիթար հայ դրերու գյուտին պիտի նվիրվեր, եթե ե դարը ըլլար իր ժամանակաշրջանը: Երկուքին ալ մտահոգությունը նույնն էր – ազգը, ազգային գոյությունը, ազգային ապագան, ազգային հոգեկան ու իմացական վերելքը:

Մաշտոցին անգոհանք պատճառողն էր ազգին վիճակը այդ օրերուն: Լույսը պակաս էր: Մաշտոց եկավ խելամուտ ոչ լոկ պակասին – այլև դարմանին: Մխվեցավ գործի ամբողջ թափովը իր ոգիին և հանճարին: Լույս կ՚աղաղակեր լուսադեմ իր ազգը, ու Մաշտոց հունական մտքին ջահը փոխանցեց ազգին՝ հայ գրով ու գրականությամբ: Միայն 50 տարի փայլեցավ ու ճառագայթեց այդ ջահը իր ոսկի շողերը: Ապա մթագնեցավ: Օտար ու վայրագ հրոսակներ մարել փորձեցին զայն: Հանթեզի ծածկվեցավ ժամանակ մը, ապագայի հարությամբ, բորբոքումի ակնդետ: Ժողովուրդը թեև մնաց խավարի մեջ, բայց միշտ լուսաբաղձ գալիքին: Դարեր տևեց խավարը՝ փոխնիփոխ թանձրացումով և անհայտացումով: Թանձր խավարի գերագույն աստիճանին՝ Մաշտոցե մնացած կայծը զորացավ լուսաբոզբոզ Սեբաստացիով: Սեբաստացին հայ խավարին մեջ կանգնեցրեց եվրոպական ջահը: Հունական միտքը տեղի տված էր՝ եվրոպական հանճարին: Սեբաստացին առաջ բերավ անով՝ այն ազգօգուտ հեղափոխությունը, զոր Մաշտոց կատարած էր ե դարուն հունական մտքով ու ճաշակով: Սեբաստացիին ծրագիրը չէր կարող իրականանալ մեկ հոգիի ուժով ու ժամանակով: Այդ մեկը թեև ըլլար գեր-հսկա: Հսկաներու ուժերն ալ սահմանափակ են: Ու անոնց՝ ամենեն անողոք սահմանը է ժամանակը:

Հավաքական ուժը միայն կարող է խորտակել ժամանակի թումբը: Եվ գիտակից էր ատոր Սեբաստացին: Անոր համար հանձնեց իր ոգին ու սկզբունքը, իր ծրագիրներն ու երազները իբր հիշատակ իր հիմնած Ընկերության: Ընկերության փառքը հիմնադրին անունն է – ՄԽԻԹԱՐՅԱՆ: Եվ այդ պանծալի անունը պահել վճռած է ամեն տեսակի զոհողությունով, անդամ կյանքի արժեքով – ՄԱՍԻՍԱՀԱՂԹ...: Վենետիկ ու Վիեննա երկու ջղուտ բաղուկները Մխիթար Սեբաստացիին: Ան է ու կը մնա արմատն ու բունը այս երկճյուղ ընկերության:

8 սեպտեմբեր 1700 – Պոլսո մեջ հիմը կը դրվեր Ընկերության: Մխիթարի մահեն վերջ կը պատահեր երկճյուղումը – 19 մայիս 1773: Բաժանումը կը նշանակե սովորաբար տկարացում: Մխիթարյաններու դեպքին մեջ, սակայն, ճշմարտված կը գտնեմ խոսքը մեր նորավեպի Իշխանին՝ Գրիգոր Զոհրապի թե բաժանումներու աղեկությունը հոն է, որ ոևէ ուժ անջատմամբ չի ջլատեր, այլ կը կրկնապատկվի:

Մխիթարյան բաժանումը արգարև կրկնապատիկ ուժ տրամադրեց ազգին: Ազգը, կը գիտե Զոպանյան, ոչ մեկ կերպով չէր տուժեր Մխիթարա Տան երկճյուղումովը. ընդհակառակը, անով հնարավոր կը դառնար հայացումը Եվրոպայի երկու գլխավոր մշակույթներու իտալական և գերմանական: Շնորհիվ այս բաժանման հայը բեղմնավորվեցավ իտալական գեղեցկությամբ և գերմանական քննադատությամբ: Եթե նկատի առնենք Մխիթարյաններու գործունեությունը, դյուրավ պիտի նշմարենք գաղափարական մրցակցություն, կատարյալին ձգտում երկու Տուներուն, որուն արդասիքն է – բազմապիսություն: Վենետիկի պարծանքն է հրատարակությունը մեր նախնիքներու գրվածներուն: Վիեննայի պարծանքն է անոնց քննարկումը: Վենետիկ հայացուցած է հույն, լատին, եվրոպական դասական բանաստեղծություններ, գլուխգործոցներ: Վիեննա հայացուցած է հույն, լատին, դասական պատմությունը, պատմագրությունները: Վենետիկ տված է հայոց ավանդական պատմությունը: Վիեննա տված է հայոց քննական պատմությունը: Վենետիկ մաքրած է գրաբարը լատին և հույն տգեղություններե, և լեզվին տված է արծաթային գեղեցկություն: Վիեննա մաքրած է գրաբարը օտար աղճատումներե ու օժտած է զայն դասական և ոսկեղեն նկարագրով: Վենետիկի ծնունդ են Զամչյան, Ավգերյան, Հյուրմյուզ, Բագրատունի, Ալիշան, Ղազիկյան, Հացունի: Վիեննայի ծնունդ են Գաթրճյան, Գարագաշյան, Այտընյան, Տաշյան, Մատիկյան, Ակինյան, Կոգյան: Աուրբ Ղաղարու մեջ, կը գիտե Զոպանյան, ամեն մարդ բանաստեղծ է, իսկ Վիեննայի մեջ ամեն մարդ կը ջանա դառնալ քննադատ-բանասեր:

Մխիթարյան զույգ Տուները ունին իրենց դպրոցական ուղղությունները, իրենց գրական ու բանասիրական որոշ համոզումները, որոնք իրարմե կը տարբերին, բուռն պայքարներու առիթ տված են ժամանակին, բայց և հրահրած երկկողմանի արդասաբեր գործունեություն: Ի՞նչ տարբերություններ կրնան ունենալ երկու դպրոցները, որոնք ամենեն կենսական հարցերու շուրջ սերտ միություն կը գավանին: Տարբերությունները սա կարգի շուրջ կը դառնան:– Ո՞րն է հայերեն դասական լեզուն: Այս հարցումին այլ կերպ կը պատասխաներ Վենետիկ իր հսկա Բագրատու-

նիով, և այլ կերպ Վիեննա իր հսկա Գաթրճյանով: Վենետիկ դասական կը հռչակեր Ե և Ժ դարերու գրաբար գրական լեզուն: Վիեննա իբր դասական կընդունի Ե դարու 410–460 տարիներու դրվածները միայն: Վենետիկ կը դործածե ամեն բառ և ոճ, որոնք կը գտնվին իրենց ընդունած դարերու մատենագրության մեջ: Վիեննա, երբ կը գրե դասական հայերեն, կը գործածե միայն 50 տարվան շրջանի ոճն ու բառերը: Որովհետև Վիեննայի համար Զ դարեն վերջ հայերենը կը մտնե ճահճախուտի մեջ: Վիթխարի երկերով, ըլլա այդ թարգմանություն և՛ ինքնագրություն, պատմություն և՛ աշխարհագրություն, աստվածաբանություն և՛ բանաստեղծություն, ներկայացված են և՛ Վենետիկի գրաբարը, և՛ Վիեննայի դասականը: Վենետիկ գերազանց է բառերու ճոխությամբ: Վիեննա – զտությամբ: Վենետիկ իրարու կը խառնե ոսկի, արծաթ, երկաթ: Եվ այս աշխատության մեջ Վենետիկ ստեղծագործ է: Վիեննա միայն ոսկիով կաշխատի: Ավելի նմանող է Ե դարու: Գրաբարի վեճը չէ սակայն – միակ: Կա նաև վեճը աշխարհաբարի: Մխիթարյանները հսկա գեր խաղացած են այս մարզին մեջ ևս: Վիեննական գպրոցեն՝ Այտընյան եղավ ռահվիրան աշխարհաբարի: Ամենուս ծանոթ է անխտիր, որ աշխարհաբար գրականությունը իր երկու ճյուղերով – արևելյան և արևմտյան՝ կը սկսի 1850-են:

Մեզի համար այսօր շատ պարզ է ու հայտհանդիման աշխարհաբարի իրավունքը հակադրությամբ գրաբարի ըլլալու հայ ժողովուրդին ոչ լոկ առտնին, այլև գրական և պաշտոնական լեզուն: Բայց այդ իրավունքը այնքան ալ պարզ չէր ու ակներև հարյուր և քիչ մը ավելի տարիներ առաջ: Առր և բուռն ընդհարումներ տեղի ունեցած են սա հարցի շուրջ – թե ո՞րը ըլլալու է արդի դրական լեզուն: Պայքարը միայն Մխիթարյան չէր: Էր նաև համազգային: Երկու բանակներու բաժնված էին գրագետները: Գրաբարյան և աշխարհաբարյան: Ճնշիչ մեծամասնությամբ գրաբարյան էին Վենետիկ և խումբ մը աշխարհիկ գրողներ: Մոլեռանդ պաշտպաններ գրաբարի և թշնամի ռամիկ, գռեհիկ, վտիտ աշխարհաբարին: Եվ ահա Վիեննայեն եկավ հեղինակավոր պատգամը աշխարհաբարի նպաստ: Այտընյան – իր հոյակապ գործով – «Քննական քերականություն արդի հայերենի» կը պարզեր աշխարհաբարի դրոշը ու կը հռչակեր զայն գրական լեզու արդի հայության: Առաջին ընդարձակ, բայց և հիմնական դիտական քերականությունն էր, զոր կը ստանար հայ ժողովուրդը 1866-ին, որմէ առաջ – կը հաստատեր Նիկոլ Աղբալյան՝ այդ լիիրավ մտավորականը – նմանը չէր գրված, ու վերջն ալ գրվիլ չէր կրնար: Այտընյանի քերականությունը հետևաբար դարձավ ակը զուլալ մյուս բոլոր գալիք քերականություններուն:

Մխիթարյանները չէին կընար անտեսիլ մամուլը: Անշուշտ, իրենց կոչումն ու գիրքը թույլ չէին տար քաղաքական օրաթերթեր հրատարակել: Բայց գիտեին տզված գրին ու գրչին աշխարհակալ ուժը: Ունեին սեփական տպարաններ օտար հողի վրա: Ինչո՞ւ չգործածեին զանոնք հայ ժողովուրդի դաստիարակության, բարձրացումին, լուսավորության: Այսօր Վենետիկ իրավացի հպարտությամբ մատնանիշ կընե իր «Բազմավեպը»: Վիեննա՝ իր «Հանդես ամսօրյան»: Երկուքն ալ իրենց տարիքով – պատկառելի: Առաջինը ունի գար ու կես ավելի տարիք գրեթե: Երկրորդը –

դարը անցեր է արդեն. «Բազմավեպը» իր էջերը կը բանա ամեն հոդվածի, որ արժեք է ու կը հայի հայուն: «Հանդես ամսօրյան» ավելի սահմանափակ է, չըսելու համար խստապահանջ, քանի կը ծառայե քննադատ – բանասեր հայագիտության: Այնտեղ միայն կը հյուրընկալվին պատմական, բանասիրական, լեզվաբանական խուզարկություններ: Այնտեղ է հույլը ամենեն նշանավոր եվրոպացի հայագետներու – Հյուբշման, Կարիեր, Մեյե, Մարքվարտ, Ստրժիգովսկի, հայ գիտնականներ – Խալաթյանց, Ագոնց, Աճառյան, Կյուլեսերյան: «Բազմավեպի» և «Հանդես ամսօրյայի» գործը Զոպանյանի հետ այսպես կարելի է բնորոշել: Ասոնց ջանքը եղած է հայությունը իր անցյալի ոգումովը վերականգնել և հայ միտքը արևմտյան քաղաքակրթության հետ անմիջականորեն և մշտապես հաղորդակից ընել: Հարկ է ընդունիլ, որ Մխիթարյան վանականներու տպագրական գործունեությունը ամենափառավոր տեղը կը գրավե վերջին դարերու հայ մշակույթին մեջ:

Դրվատիք չեն խնայած եվրոպացի հայագետներ: Մխիթարյաններու կը վերադրե Գելցեր ԺԸ դարու հայ դրական շարժումը, զարթոնքը: Առանց Մխիթարյաններուն, կը հավաստե Ֆետտեր, եվրոպական հայագիտությունը և հայ մտքի եվրոպականացումը 200 տարի հապաղած պիտի ըլլար: Ծանրակշիռ է Հյուբշմանի դատաստանը՝ – միայն Մխիթարյաններով հնարավոր դարձավ հայագիտությունը և հայ բանասիրությունը Եվրոպայի մեջ: Մխիթարյաններու գործը եղած է առիթ նաև քննադատություններու, ըլլա այդ թշնամական կամ բարեկամական, առարկայական կամ ենթակայական: Առանց իսկ քննադատվելու Մխիթարյանները իրենք գիտակից են իրենց թերություններուն: Արդեն ոչ մեկ մարդկային գործ կատարյալ է: Հետևաբար Մխիթարյանները չէին կարող բացառություն կազմել և իրենց 300 տարիներուն ընթացքին մնալ անթերի:

Հայ գրադետներ կը սիրեն շեշտել, որ Մխիթարյան գրականությունը – գիրք կը հոտի: Գրքին հոտը հակադիրն է – թարմին, առույգին, ժողովուրդի մատչելիին: Ակնարկ մը Մխիթարյաններու զույգ գրադարաններուն բավ է համոզվելու համար, որ անոնք արտադրած են երկեր ժողովրդի լայն խավերուն մատչելի: Վահե Օշական դրական զրույցի մը պահուն կրսեր մեզի,– Դուք, վիեննացիներդ, եք հիմ դնողը հայ վիպասանության մեր դրականության մեջ, և չունիք լուր: Լուր ունինք: Մենք չենք սիրեր ի ժամու և ի տարաժամու փող հնչեցնել: Բայց այս չի նշանակեր, թե չենք գիտեր ի հարկին մեր լիիրավ արժեքները շեփորել: Կընդունինք, թե քննադատություն, բանասիրություն, լեզվագիտություն, պատմագրություն վեր կը մնան ժողովրդի սովորական մակարդակեն: Բայց ո՞ր ազգին մեջ բանասիրությունը և քննադատությունը ունին լայն խավեր: Ամեն ազգի մեջ բանասիրությունը կուղղվի ընտրանիի մը, որուն պարտքն է բարձրացնել ժողովուրդին մակարդակը, նրբացնել ճաշակը: Մխիթարյան բանասիրությամբ ու քննադատությամբ պատրաստված ուսուցիչներ բոլորովին այլ կերպ պատմություն ու մատենագիտություն պիտի ուսուցանեին հայ վարժարաններու մեջ: Պիտի դաստիարակեին սերունդ մը ճշմարիտով թրծված և ոչ թե առասպելներով մեծամոլ:

Դպրոցական գործունեությունը Մխիթարյաններու կյանքին մեջ մեկն է էական մասերեն: Գոյություն հազիվ կառնե այս Ընկերությունը, տպարանի և մատենադարանի հետ միասին դպրոցներ կը բացվին այնպիսի վայրեր, ուր հայությունը զուրկ էր հայեցի կրթության միջոցներեն: Դպրոցական հսկայական ցանցով մը կը պաշարեն ամբողջ հայությունը: Ձեզի ծանոթ է թերևս միայն Մուրատ Ռափայելյանը: Բայց անկե առաջ են Մխիթարյան վարժարանները Պարսկաստանի, Խրիմի, Հունգարիո, Տրիեստի: Անկե վերջ են և անոր ընթացակից Մխիթարյան վարժարանները Պոլսո, Զմյուռնիո, Պարտիզակի, Մշո, Տրապիզոնի, Կարնո: Մխիթարյանները իրենց դպրոցներով հայ ժողովրդին հետ ապրած են, հալածված և տեղահանված: Երբ հայու տունը քանդվի մեկ երկրի մեջ ու հայը միշտ կենսունակ և անվհատ ուրիշ երկիրներու մեջ ապավեն դտնե ու բարգավաճիլ սկսի, Մխիթարյանները կը հետևին անոր շարժումներուն իրենց ծրագիրներով: Այսպես է, որ Մխիթարյան հին դպրոցները գրեթե բոլորովին քանդվեցան և նոր գաղութներու մեջ նորեր հիմնեցին: Այսօր տասնյակ Մխիթարյան վարժարաններ գոյություն ունին զանազան աշխարհամասերուն մեջ, որոնց ուրիշներ պիտի հաջորդեն, երբ պայմանները ներեն՝ Սևանի կարոտաբաղձ ափերուն:

Բուռն մը Մխիթարյաններ տասնյակ հազարավոր հայորդիներ դաստիարակած նվիրած են ազգին: Անոնց սաները հայ նոր գրականության զարթոնքի իրապաշտ և արվեստագետ սերունդի պարագլուխներն են հանձին Պեշիկթաշլյանի, Ծերենցի, Թերզյանի, Վարուժանի: Հապա բանակը բժիշկներու, իրավագետներու, ճարտարապետներու, որոնք հպարտանքով ու պարծանքով իրենք զիրենք կը դավանին Մխիթարյան սան: Բայց Մխիթարյան սաներու և Մխիթարյան դաստիարակության արժեքը այդ չէ. բանաստեղծեն ու իրավաբանեն վեր ու առաջ բան մը կա, և այդ է՝ Հայ Մարդը: Մխիթարյանը ինքնին քննադատ կամ բանաստեղծ ըլլալե առաջ է հայ և ի սեր հայուն կը դառնա քննադատ կամ բանաստեղծ: Մխիթարյանը անտարակույս կը գնե իր սաներուն մեջ «հայու ոգին» հրեղեն: Մխիթարյան վարժարանի շրջանավարտ սանը պետք է ըլլա կիրթ, գիտակից հայ, հայ մը, որ իր բարոյականի և նկարագրի գիծերով պատիվ բերե իր ազգին:

Մխիթարյանը չեք ճանչնար ու չեք գնահատեր արժանապես, եթե մոռնաք անոր հայեցի շեշտը, ոգին, թռիչը: Դատեցեք զինք ինչպես որ կուզեք, գտեք անոր գործին մեջ ամեն հնարավոր թերություն: Կոչեցեք զինք միակողմանի: Բայց մեկ բան մի ենթարկեք կասկածի — անոր հայությունը, հայության նուրբ զգացումը, անձնազոհ հայրենասիրությունը: Եթե Մխիթարյանը փառք փնտրտեր, դիզեր դրամ, շատոնց կը խոտորեր իր ուղիղ գիծեն — հայության դիծեն: Ան նախընտրեց ըլլալ նվազ փառավոր, հարուստ — բնավ, և մնալ հայ միսով, ջիղով, արյունով: Որովհետև իսկական փառքը, հարստությունը — ճշմարտության և հավատարմության մեջ է: Անշեղ ճշմարտությամբ, աներեր հավատարմությամբ կը դավանի ինքզինք Հայ — Մխիթարյանը, և անով ինքզինք կը զգա և՛ փառահեղ և՛ հարուստ:

Այդ է միակ իր գոհացումը հոդեկան: